

7. Աւգուստին Բաշեցին ՀՍ-ի քարտուղար Ֆր. Ինկուլիին

[1647, ապրիլի 27]

Է

Յիսուսի Քրիստոսի նուաստ ծառայ ֆրա Օգոստինոս արքեպիսկոպոսէս հասցէ թուխտ ողջոյնի եւ սիրոյ առ պատուական եւ գերափայլ ջան հաւատոյ մօնսինիօր Ֆրանցիսկոս Ինկուլին, գոր աստուած անասան պահեսցէ եւ առողջ երկար ժամանակաւ ամէն:...աներոս հայր բարի, տէր Մատաթէն մեզ հասաւ քոին թղթովդ, գոհանամ ստեղծողէն, որ մեզի՝ որքս յիշեցեր եւ խիստ բարի բան էք արել, որ Գոր[տ]ըստանոյ ժողովուրդն յիշեցիք ողորմութիւն առաքելով վասն Բ[2] քահանայի, այսինքն՝ տէր Մատաթին եւ տէր Գրիքորին: Ապա ես յառաջ ժՋ [16] ամսով, ինով աղքատութեամբս, տէր Պողոսն Կէծկեցի հետ մէկ սպասարի առաքել էի նոքա մօտ, այժմ հօն է, խիստ բարի քահանայ է, ամաց ՀԵ [75]-ից. լաւ քարոզող, տէր Մատաթէն էլ կու առաքեմ նայ մօտն: Դուք այն ոօճիկն, որ խոստացել էք, տարեց տարի առաքեցէք: Տէր Գրիքորն արէկ հօտ վասն ուսման՝ օգն կենաս, որ լաւ լաթին ուսնի: Վասն սիրոյ հեղման արեան տեսն մերոյ Յիսուսի Քրիստոսի գիս, ծերս յիշեցէք որպէս մէկ պակաս միսօճարի, խեղճ եմ եւ աղքատ անկեալ եմ, չեմ կարիլ մարմնարո բանիլ. հազիւ հոգեւորն կու կատարեմ, հանապազ ձեզի աղօթող եմ: Խնդրեմ հրամանուցող սուրբ Կօնգրէկացիօնին շատ բարեւ անիս մեր բերանէս, ես նոցայ մէկ պակաս որդին եմ եւ աղօթող, բաւ է, ողջ լեր ի տէր:

Գրեցաւ թվին ՌՌ ԽԷ [1647], ապրիլի ԻԷ [27], գրողս ձեզի աղօթող եւ ծառայ:

Fra Augustinus arcepiscopus Naxiuansis

SOCC, vol. 65, ff. 313r. Բնագիր: